ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑԸ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԱՍԻՆ

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ա. ԽԱՌԱՏՅԱՆ

Հայ ազգային հերոս, զորավար Անդրանիկի մասին ստեղծվել է բավականաչափ պատկառելի գրականություն՝ գրքեր, գրքույկներ, ամսագրային ու լրագրային բազմաթիվ հոդվածներ, հուշեր, հրապարակումներ և այլն։ Դրանց մեջ առանձնահատուկ տեղ ունի Վահան Թոթովենցի՝ Արսեն Մարմարյան ստորագրությամբ հրատարակված «Զոր. Անդրանիկ և իր պատերազմները» (Կ. Պոլիս, 1920) գիրքը[1]։

Հեղինակն իր գիրքը գրել է նպատակի շատ որոշակի գիտակցությամբ, որ երևում է նրա «Նախամուտից»։ «Գնահատումի, վերաշինության, բարոյական խոշոր արժեքներու վերհանման այս օրերուն արժե տալ զոր. Անդրանիկի պատերազմներու պատմությունը»,—գրում է նա։—Մենք շատ քիչ բան գիտենք Անդրանիկի կանուխ կյանքի մանրամասնություններն, ինք պատմած է իր մասին հատուկոտոր... Մենք պիտի ճոխացնենք մեր պատմությունը, զոր մոռցած ենք իր իսկ բերանեն»[2]։

Հեղինակը շեշտում է, որ լավատեղյակ է մասնավորապես Անդրանիկի մասնակցությանը Բալկանյան և համաշխարհային պատերազմներին և որ իր նպատակն է՝ «տալ ստույգ պատմությունը և ոչ հեքիաթայինը»[3]։

Հիրավի, ստուգապատում պատմություն գրելը, մանավանդ Անդրանիկի մասին, ընդ որում, նրա կյանքի մի երկարատև ժամանակաշրջանն ընդգրկող առաջին ստուգապատում պատմությունը, խիստ դժվարին գործ էր։ Անդրանիկը և նրա անունը իրականի հետ միասին դարձել էին լեգենդ, նրան վերաբերող պատմությունները՝ հերոսական ասք, որ ոգի էր ներշնչում տառապած ժողովրդին։ Իրականն ու ոչ հավաստին զատել-առանձնացնելը, սակայն, միանգամայն մատչելի էր մեծ տաղանդի տեր և հիմնավոր կրթություն ստացած Թոթովենցին։ Գրողը Անդրանիկի հրամանատարությամբ կովկասյան ճակատում կռվելուց հետո[4] *մի քանի տարի, գրեթե մինչև զորավարի գործու-*

---

[1] Թոթովենցը ծնվել է 1889 թ., Խարբերդի Մեղրե գյուղում։ Աբդուլ Համիդի բռնապետության տակումից հետո Կ. Պոլսից անցել է Ֆրանսիա, ապա ԱՄՆ, ուսանել Վիսքոնսինի համալսարանում։ 1915 թ. Թոթովենցը Կովկասում էր և մարտնչում էր Անդրանիկի հրամանատարությամբ գործող կամավորական դնդերում։ 1920 թ. ընտանիքով մեկնել է Կ. Պոլիս, ապա Նվյորք, և ԱՄՆ։ 1922 թ. հրավիրվում է Երևանի նորաստեղծ համալսարան՝ անգլերեն դասավանդելու։ Մինչև 1936 թ. Թոթովենցը ապրում է ստեղծագործական բեղուն շրջան՝ ստեղծելով գեղարվեստական մնայուն արժեքներ («Ամերիկա» պատմվածաշարը, «Աղավնիներ», «Կյանքը Հին Հռոմեական ճանապարհի վրա», «Երկու սուր», «Մոխրակույտ» և այլն)։ 1937 թ. զոհվել է ստալինյան բռնությունների զոհը (տե՛ս Ս. Արզումանյան. Վահան Թոթովենց. Երևան, 1961, էջ 9—26։ Ա. Չելեպյան. Զորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը. Լոս Անճելես, 1984, էջ 411)։

[2] Ա. Մարմարյան. Զոր. Անդրանիկ և իր պատերազմները, էջ 3։

[3] Նույն տեղում։

[4] Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան, Թոթովենցի ֆոնդ, № 174, էջ 2։

նեության վերջին շրջանը Անդրկովկասում, եղել է նրա մերձավոր շրջապատում, մշտապես շփվել նրա հետ։

Թոթովենցի գիրքն ընդգրկում է Անդրանիկի գործունեությունը՝ սկսած Շապին Դարահիսարից, նրա ծննդավայրից մինչև 1919 թ. փետրվարի վերջը, երբ զորավարը Զանգեզուրը թողնելով մեկնում է Էջմիածին՝ այնտեղից Թիֆլիս և ապա Փարիզ անցնելու համար։ Դրանից հետո սկսվում է Անդրանիկի կենսագրության վերջին՝ տարագրության շրջանը։ Թոթովենցը նկատի է առել այս բեկումնային պահը Անդրանիկի կենսապատումի համար։ «Անգլիական պատգամավորությունն (որի պնդումներին տեղի տալով Անդրանիկը հեռանում է Զանգեզուրից—Ա. Խ.) մինչև Անդրանիկի Բարիզ հասնիլը զանազան հետաքրքիր դեպքերը ես կգրեմ ուրիշ առթիվ»[5],—գրում է նա։

Թոթովենցի գիրքը սոսկ կենսագրական բնույթ չունի. ամեն կերպ ձգտելով հավաստի ներկայացնել փաստերը, իրադարձությունները, Անդրանիկի շրջապատի, նրան առնչվող բազմաթիվ անձանց նկարագրերը, գրողը այստեղ, իր անհատականության խոր կնիքն է դրել այդ փաստերի ու իրադարձությունների մեկնաբանության (անշուշտ, նաև ընտրության), ինչպես և իր պատմության մեջ հիշվող անձանց բնութագրերի վրա։ Այս իմաստով Անդրանիկի կենսապատումը նրա գրչի տակ վերածվել է մի յուրահատուկ ստեղծագործության, որտեղ պատմությունն ու դրա գեղարվեստական ընկալումը հանդես են գալիս զուգորդված, ընդ որում, տարասեռ այս շերտերը ի հայտ են գալիս ոչ թե հակադրության, այլ իրար լրացնելու միտումով։ Ժողովրդական հերոսի մեջ Թոթովենցը նկատել-առանձնացրել է մի քանի գծեր, որոնք, թվում է, առաջնային նշանակություն ունեն նրա նկարագրի համար և որոնցով պայմանավորված է նրա վերաբերմունքը մարդկանց ու իրականության հանդեպ։ Այս գծերը սկիզբ են առնում Անդրանիկի ու նրան ծնող ժողովրդի ճակատագրերի ընդհանրություններից։ Կարելի է այդ գծերի թվարկումը սկսել բռնության հանդեպ Անդրանիկի տածած խոր ատելությունից։ Այդ ատելությունը կարծեք ունի ծագումնաբանական սկիզբ, ոչ որ անզուսպ ատելություն չի ներշնչել նրան բռնության նկատմամբ, որ անհրաժեշտորեն պետք է դրսևորվեր ըմբոստության ձևով։ Բայց դրանով հանդերձ, պատանին իր մեջ կրում էր այն լիցքը, որ կուտակվել էր ժողովրդի մեջ, նրա բնկերում և որը պոռթկացող ընդդիմության դրսևորումով ծառս էր լինելու առաջին իսկ պատեհ առիթով։

Կենսագրական դժբախտ հանգամանքն իսկ (մեռնում են նրա կինն ու երեխան[6]), ասես դառնում է զորեղ ազդակ Անդրանիկին դեպի ժողովուրդն ու նրա պայքարը տանելու ճանապարհին։ Այդ ճանապարհը ոտք դնելով, Անդրանիկը հետագայում պետք է դառնար թուրքական բռնակալության դեմ ըմբոստության դրոշակակիրը։

Շապին Դարահիսարում հնչակյանների գաղտնի խմբի մեջ ընդգրկվելուց, հորը ծեծողից վրեժ առնելուց և թուրքական բանտից ընկերների օգնությամբ Կ. Պոլիս փախչելուց հետո փաստորեն սկսվում է Անդրանիկի պայքարը օսմանյան բռնակալության դեմ։ Թոթովենցը դեպքերի զարգացումը ներկայացնում է իրենց բնականոն ընթացքի մեջ և նրա շարադրանքի պարզ հյուսվածքում շատ ցայտուն երևում է Անդրանիկի խառնվածքի անսովորությունը, բացառիկ մարդասիրությունն ու ասպետականությունը։

Հայտնի է, որ Կ. Պոլսում հրշեջները (թուլումբաջիներ) հարգանք էին վայելում բնակչության մեջ։ Արհամարհանքը սուր վտանգի հանդեպ և անձնազոհության պատրաստակամությունը՝ ի սեր ուրիշի փրկության, մշտապես ռոմանտիկ գծեր էին, որ մյուս արհեստավորներից առանձնացնում էին հրշեջներին։ Պատահական չէ, որ նրանց ոչ քիչ դեպքերում օգնության էին շտապում անվեհեր մարդիկ, որոնց հուզում էր ուրիշին փրկելու զգացումը։

---

5 Ա. Մարմարյան. նշվ. աշխ., էջ 404։

6 Նույն տեղում, էջ 6։

Թոթովենցի հերոսը հայտնվում է նույն իրադրության մեջ։ Կ. Պոլսում նա անգործ էր (չհաշված ոստիկանությունից խուսափելու նրա նախազգուշությունները)։ Եվ ձանձրացող Անդրանիկը նետվում է հրդեհների մեջ, իրեն տալիս աղետյալներին օգնելու՝ կարծեք ներքին պահանջմունք դարձած գործին։ «Անգամ մը,—գրում է Թոթովենցը,—ծուխերու և բոցերու մեջ տունը կփլի և ինքն ալ կմնա տանը տակ, հազիվ ինքզինքը կձգե դուրս, գրեթե կիսամեռ վիճակի մեջ։

Անդրանիկ այս բոլորին մեջ չի հետապնդեր ոչ մի անձնական շահ։ Հրդեհ, ծուխ, իրարանցում, աղմուկ, կռիվ, տարրերու տարերային պայքար, բրտինք, վտանգ, հերոսություն։ Ահա Անդրանիկի հոգու և երևակայության, սպրելու ատաղձները։

...Առանց ասենց՝ մենք կկորսնցնեինք մեր ժողովրդի ներկա ռազմական վարկը բարձրացնող ամենախոշոր ֆաքտորը»։

Այսպիսին է Անդրանիկը՝ հոգևոր ու ֆիզիկական բոլոր հարկավոր նախադրյալներով պատրաստ հայդուկային դժվար և անհրաժեշտ պայքարի համար։

Անդրանիկի հանդուգն ե համարձակ բնավորությունը, հարմարագույն պահին իր գործողությունների պլանը ծավալելու և ծանրագույն իրավիճակներում ակնթարթային վճիռներ կայացնելու բացառիկ ընդունակությունը, որ հետագայում բնութագրական էր դառնալու նրա ռազմավարական գործունեության համար, համոզիչ օրինակներով է ցույց տրվում Թոթովենցի գրքում։ Բաթումից Կարս տանող ճանապարհին (Անդրանիկը Արևմտյան Հայաստան էր դիմում ռուսական սահմանի վրայով) նա բռնվում է ռուսական ոստիկանության կողմից և վճռում փախչել, որի մասին հայտնում է ընկերներին։ Ընկերները վարանում են և վախենում՝ կարծելով, որ Անդրանիկի փախուստը, հավանարար, ծանր կանդրադառնա իրենց վրա։ Անդրանիկին հաջողվում է բթացնել և՛ ընկերների, և՛ պահակ-ոստիկանի աչալրջությունը։ Այս միջադեպով Թոթովենցը նախապատրաստում է ժողովրդական հերոսի հաստատակամությունը. նա գնում է ժողովրդական պայքարի դրոշ բարձրացրած ֆիդայիների մոտ ե ոչ մի ուժ ի վիճակի չէր վակելու նրա ճանապարհը։ Նույնիսկ պատահականությունները։

Թոթովենցի դիրքը իրադարձությունների ընթացքի պարզ շարահարում չէ։ Հեղինակը իմաստավորել է իր հերոսի գործողությունները նրա աշխարհընկալման, իրականության դնահատման, սկզբունքի ու կամքի հղկման բնական պայմանների մեջ։ Հնչակների գաղափարական դպրոցն անցած պատանու մեջ չափազանց սրված էր մարդու ե ժողովուրդների իրավունքների դիտակցումը։ Բռնությանը ուժով ընդդիմանալու գաղափարը, որ տարերայնորեն ի հայտ էր գալիս Անդրանիկի մեջ Շապին Գարահիսարում և Կ. Պոլսում, սնուցվում է նրա անմիջական դիտարկումներով։ Անդրանիկը մոտիկից է տեսնում ժողովրդի կրած հարստահարությունները ու տառապանքները, նրա իրավազրկությունն ու վիշտը։ Եվ վերջապես, այդ գաղափարը նա հստակ ձևակերպում է Բասենի Գոմաձոր գյուղի մի շինականի հետ զրուցելու ժամանակ։ «Պետք է կռվիլ, սուրով պետք է հասկցնել թուրքին, որ անիկա իրավունք չունի ուրիշին սեփականությունը կողոպտելու, մարդկանց և ամբողջ ժողովրդի մը արդար իրավունքները բռնաբարելու»,—ասում է նա[8]։ Չարության դեմ բողոքի լավագույն միջոցը, նրա համոզմամբ, պայքարն է չարության դրսևորումների դեմ։ Այս մտայնությամբ է Անդրանիկը զինվորագրվում հայ ժողովրդի ազատագրական պայքարին։

Իր առաջին մարտական քայլերը, ինչպես հայտնի է, Անդրանիկը անցկացրել է Աղբյուր Սերոբի հրամանատարության ներքո։ Թոթովենցը շատ հակիրճ է կանգ առնում Անդրանիկի այս շրջանի գործունեության վրա։ Երբեմն

---

7 Նույն տեղում, էջ 12։

8 Նույն տեղում, էջ 39։

նա ուշադրություն չի դարձնում իր պատումի ժամանակագրությանը։ Այսպես, գրքում չի նշվում, թե Անդրանիկը երբ է ոտք դրել Սասուն։ Հուշագրողներից Ռուբենը և Սեպուհը այդ ժամանակն են համարում 1895 թ.[9]։ Այս կարծիքին է նաև Ա. Չելեպյանը[10], որը հատուկ ուշադրություն է դարձրել նշված ժամանակը ճշտելուն։ Բայց խնդրին սպառիչ պատասխան է տվել ինքը՝ Անդրանիկը, որը 1907 թ. գրել է. «94-ից անմիջապես հետո մենք ենք մտել Սասուն, ապա եկել են և ուրիշներ»։ Թոթովենցին, իհարկե, հայտնի է Անդրանիկի՝ Սասունում վարած կռիվների ժամանակագրական կարգը, սակայն նա իր ուշադրության կենտրոնում է պահում, իր խոսքերով ասած, «հայ հեղափոխականներու, մանավանդ զոր. Անդրանիկի անցուցած կյանքը Սասնո և Մուշի լեռներուն և դաշտերուն մեջ, անոնց դատարանները, ապրելակերպը. բարոյականը, դիվանագիտական հարաբերությունները, առհասարակ ամբողջ էենցաղը»[11]։

Այս տեսակետից Թոթովենցի շարադրանքը տալիս է հայդուկային շարժման կազմակերպման, ներքին փոխհարաբերությունների, ժողովրդի հետ հայդուկների ունեցած առնչությունների ուսումնասիրման այնպիսի օրինակներ, որոնք անգնահատելի են ընդհանրապես ամբողջ շարժման և դրա մեջ Անդրանիկի տեղի բնութագրման համար։ Ուշագրավ է, մանավանդ, հայդուկների կազմակերպած ժողովրդական դատարանի գործունեությունը, ժողովրդական արդարադատության այդ ինքնագործ մարմինը, որը ազնվասիրտ և միշտ անխարդախ լեռնականները նախընտրել են թուրքական դատարանից՝ բռնության ու կաշառակերության, բացահայտ կողմնակալության ու չարամտության հնամենի տյդ որջից։ Անդրանիկի և հայդուկների գործադրած արդարադատությունը հենվում էր սովորույթի և ժողովրդի ընդերքում խոր արմատներ ունեցող արդարամտության գիտակցության վրա։ Այս նկատի առնելով Թոթովենցը գրում է, որ «այս դատարանը նման էր հին, բարբարոս գերմանական ցեղերու մեջ տեղի ունեցած դատավարություններու, որոնց ավանդությունները հետո դարձան—եղան գերմանական և համաեվրոպական օրենսգիտության հիմունքներու մեկ մասը»[12]։

Ընդհանրապես, հայդուկների անձնազոհ կռվի ամբողջ տրամաբանությունը ինքնին հետամտում էր ժողովրդի համար իրավունքի և օրենքի հաստատումը օսմանյան իրավազանց և բռնակալական հասարակական ու քաղաքական իրականության մեջ։ Մյուս կողմից, Անդրանիկի գործունեության այս կողմի բացահայտումով Թոթովենցը ձգտել է ցույց տալ ժողովրդական հերոսի նկարագրի մյուս կարևոր գիծը՝ արդարամտությունը։ Դրանով է առաջնորդվել Անդրանիկը իր ամբողջ դժվարին կյանքում, թե՛ թուրքական ջարդարարներից իր ժողովրդին պաշտպանելիս, թե՛ այս կամ այն գործչի կեցվածքն ու վարքագիծը քննադատելիս, թե՛ հասարակ հայ զինվորին մեծարելիս և թե՛ սպայական բարձր կոչում կրող անձանց դավաճանությունը մերկացնելիս։

Թոթովենցի շարադրանքի ընթացքում պարզորոշ երևում է հեղինակի որոշակի սկզբունքը՝ ընդգրկել ոչ թե Անդրանիկի կռիվների ամբողջ պատմությունը իր մանրամասներով, այլ հիմնականն ու հատկանշականը։ Անդրանիկի գործունեության առաջին շրջանի համար նա ուղենշային է համարում այդպիսի չորս գլխավոր իրադարձություններ՝ Խալիլ փաշայի սպանությունը, Առաքելոց վանքի կռիվը, Ծովասարի կռիվը և Աղթամարի շրջապատման հաղթահարումը։ Ըստ էության, այս իրադարձությունների մեջ դրսևոր-

---

9 Ռ ու բ ե ն. Հայ հեղափոխականի մը հիշատակները. հ. 3, Լոս Անճելես, 1952։ Ս ե պ ու հ. Դրվագներ Սասունի կռիվներեն. Կ. Պոլիս, 1910, էջ 17։

10 Ա. Չ ե լ ե պ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 90—91։

11 Ա. Մ ա ր մ ա ր յ ա ն. Նշվ. աշխ., էջ 34։

12 Նույն տեղում, էջ 48։

ված է հայդուկային ընդվզումների ամբողջական նկարագիրը, որ բավականաչափ տարողունակ է՝ անհատական վրիժառության ակտից, որպիսին էր Խալիլ փաշայի սպանությունը, մինչև բացառիկ ու հերոսական պայքարը թուրքական զանգվածային զինական ուժերի դեմ։ Նկարագրելիս Թոթովենցը աննշմար մեկ-երկու ուրվագծերով հիմնավորում է երևույթը, որը, առանց դրա, թվում է՝ կլիներ հիպերբոլիկ։ Այս կերպ գրողը իր հերոսին դնում է բացառիկ, բայց ոչ բնավ անհավանական իրադրության մեջ։ Այսպես, հոդացավը, որով տառապում էր Անդրանիկը Խալիլին դարանակալելուց անմիջապես առաջ, չքանում է նրա հասկանալի լարվածության և սեփական օրգանիզմը վերահսկելու մեծ կարողությունների շնորհիվ։ «Անդրանիկի երևակայությունը կսկսի ավելի բոցավառիլ։ Անիկա կգինովնա, այլևս ոչ ոսկրային ցավ կզգա, և ոչ ալ որևէ վտանգ»,—գրում է Թոթովենցը[13]։

Խալիլը միակը չէր։ Ժողովրդական վրիժառուների գնդակները ամենուրեք հետևում էին թշնամու գործակալներին, կառավարության գործիք դարձած ուժերին՝ հույս ու հավատ ներշնչելով ժողովրդին։

«Առաքելոց վանքը» գլխում Թոթովենցը իրականը ներկայացնում է բանաստեղծական շնչով, որտեղ ինքնաբուխ և ազնիվ պաթետիկան հիշեցնում է Վարուժանի ոճի հանդիսավորությունն ու Սիամանթոյի հերոսականության պաշտամունքը՝ խորքում ունենալով կոնկրետ—իրականի ու ռոմանտիկականի զուգորդումները։ Այսպիսի ոճը կարծես բնականոն ձևով բխում է իրադարձության բացառիկությունից։ Երեսուն-երեսունվեց հայդուկներով Անդրանիկն ամրանում է Մշո Ս. Առաքելոց վանքում և հաջողությամբ հետ մղում թուրքական կանոնավոր զորքերի ու անխուսափելի բաշիբոզուկների բազմապատիկ չափերով գերազանց ուժերը։ Անդրանիկն այստեղ պատկերվում է իբրև փորձառու և հայդուկի հանդգնությունը մարտավարի զարմանալի տաղանդին լիովին ի սպաս դրած հերոս։ Իսկապես, երեկվա մարտիկը, որն իր գործելակերպով դրեթե չէր տարբերվում ընկերակիցներից, բռնակալների դեմ մղվող մարտերում աճել-հասունացել էր մի անհրաժեշտությամբ, որը իբրև հասկանալի ու պարզ իրողություն՝ իմաստավորում էր գտել հայդուկների կողմից։ Անդրանիկի հեղինակությունը իր միջավայրում ճանաչելու տեսակետից ուշագրավ է Սեբաստացի Մուրատի հիմնավորումը, որ հանդիպում ենք Մ. Վարանդյանի գրքում. «Անդրանիկ աչք ունի... սար ու ձոր կանցնինք խմբով՝ հրացաննիս ուսերնիս, ու ամեն մեկս իր ճամբան կքալե, իսկ Անդրանիկ՝ ամենքիս ճամբան. մենք անհոգ կերթանք՝ ան կտեսնի, կդիտե, կչափե ամեն քար ու դար, ամեն ժայռ ու բլրակ, մացառ ու պուրակ։ Ոչինչ չի վրիպի նրա տեսողությունից։ Եվ ինչ որ մի անգամ տեսավ՝ էլ երբեք չի մոռանար։ Թե նույն ճամբով հետ գալու լինինք կռվով ու նահանջով, նա հրաշալի գիտի, թե մինչև ուր պիտի քաշվինք՝ այսինչ բլրին, քարին, սարին, ձորին, դարին հանգչելու համար։ Հետո ան գիտե աննման դիրք բռնել թշնամիին դեմ և մի անգամ, որ նա մեր տեղերը որոշեց կռվից առաջ, այն ժայռի տակ, այս բլրի ետև, այն պուրակի ծոցում, ապա մենք վստահ ենք, որ դա լավագույնն է։ Արդարև, նա երբեք չի սխալվում...»[14]։

Այսպիսին էր Անդրանիկը Ս. Առաքելոց վանքի պաշտպանությունը կազմակերպելիս։ Թոթովենցը այսպիսի ծավալուն բնութագրումներ չի անում, բայց նրա զուսպ տողերի մեջ նկարագծվում է Անդրանիկի մեծ հեղինակությունը։ Գրողը ի հարկին անդրադառնում է նաև Անդրանիկի մարտական ընկերակիցներին։ Այսպես, նա վերհանում է Գևորգ Չավուշի անձնվիրությունն ու հիանալի ճարպկությունը և մեջբերում «Դրոշակի» 1907 թ. սեպտեմբերի 9-ի հոդվածը՝ նվիրված այդ հերոսին։

Երեսունմեկօրյա պաշարումից հետո Անդրանիկին և նրա ջոկատին հա-

13 Նույն տեղում, էջ 68։

14 Մ. Վարանդյան. Մուրատ. Պոսթըն, 1931, էջ 98։

չողվում է ճեղքել թշնամու հոծ շղթան և գիշերվա մթության մեջ, առանց որևէ սպանված կամ վիրավոր տալու, բարձրանալ լեռները։

Թոթովենցը ընդգծել է Ս. Առաքելոց վանքի անօրինակ կռվի թողած մեծ տպավորությունը ժողովրդի վրա, նրան պայքարի ու ապրելու ոգեկոչող այդ իրադարձության նշանակությունը։ «Առանց Առաքելոց վանքի՝ Անդրանիկ չպիտի կրնար մղել համաշխարհային պատերազմի Կովկասյան ճակատի վրա Տիլմանի ճակատամարտը, Դատվանի կռիվները և Պիթլիզի գրավումը»,— եզրակացնում է նա[15]։

Ս. Առաքելոց վանքի կռվի նկարագրությունից հետո Թոթովենցն անցնում է 1904 թ. ապրիլին սկսված՝ Սասունից մինչև Վան ձգվող ազատագրական կռիվների և մասնավորապես Սասունում Անդրանիկի ջոկատների մարտերին։ Թոթովենցը չի անդրադարձել 1902—1903 թթ. իրադարձություններին և դա հասկանալի է, նա շարադրում է Անդրանիկի կարևոր կռիվների պատմությունը։ Ասենք, նշված տարիները հարաբերական դադարի տարիներ էին։ Դժոխք Հրայրը և Վարդան վարդապետը բավական հաջողության էին հասել կառավարության թելադրանքներից քրդերին ձերբազատելու գործում[16]։ Առանց քրդական աշիրաթապետների համագործակցության, սուլթանը վարանում էր իր գործողությունների մեջ։ Որոշ նշանակություն ուներ նաև եվրոպական տերությունների դիվանագիտական միջամտությունը։ Ֆրանսիայի, Անգլիայի և մյուս երկրների հյուպատոսները բռնակալության մոլուցքը զսպելու ազդեցիկ միջոց էին համարում ընդդիմության ղադարեցումը։ Հակառակ սրանց հերդորների, հայդուկների զինվորական խորհուրդը որոշում է առանց մարտերի չթողնել Սասունը։ Մինչ այդ, սուլթանը զորքեր էր մտցրել Սասուն և 1904 թ. ապրիլին ծայր են առնում ինքնապաշտպանական կռիվները։ «Մեծ կռիվները» վերնագրով գլխում Թոթովենցը նկարագրում է Սեմալի, Սպաղանա, Գոմերի, Շամիրամի, Գելիեգուզանի, Քովի, Ծովասարի և այլ կռիվները։ Դրանք ընթանում էին հայդուկների համար չափազանց դժվարին, գրեթե անտանելի պայմաններում։ Գերազանց զինված և ուժի անհամար գերակշռություն ունեցող թշնամու հետ նրանք բախվում էին իրենց շարժունակությունը (որ նրանց հաջողության գլխավոր նախապայմաններից էր) խիստ կաշկանդած վիճակում։ Պետք էր փրկել բնակչությանը, տեղահանել նրան՝ ապահով բարձունքներ փոխադրելու համար և այրել լքված գյուղերը՝ թշնամուն ապաստան չտալու նպատակով։ Սասունի այս անօրինակ հերոսական մաքառումը, այսուհանդերձ, պետք է ավարտվեր 1904 թ. մայիսին՝ ուժերը չափազանց անհավասար էին, զոհերը չափազանց շատ։ Թուրքական զորքերը արյան նախճիր սարքեցին գրավված բնակավայրերում՝ կոտորվեց շուրջ 8 000 հայ, ավերվեցին մի քանի տասնյակ գյուղեր[17]։

Ադթամարի կռվով Թոթովենցն ավարտում է երկրում Անդրանիկի և նրա ջոկատների ծավալած մարտերի պատմությունը։ Իր ռազմագիտական տաղանդի շնորհիվ Անդրանիկը այս անգամ ևս կարողանում է առ ոչնչի հասցնել թուրքերի թվական գերազանցությունը և բարեհաջող թողնել կռվին։ Հայդուկները հեռացել էին, սակայն կռվում փողփողացող երկու դրոշները պաշարումը սաստկացնելու նոր ներշնչումներ էին տալիս խարված թուրքերին։ Իր երեսուն մարտիկներով Անդրանիկն անցնում է Կովկաս։

Թոթովենցը լուրջ ուշադրություն է դարձնում Անդրանիկի մարտավարական մեծ շնորհներին։ Ադթամարի կռվի նկարագրությունն ավարտելուց հետո նա գոքում դետեղել է Անդրանիկի «Մարտական հրահանգների» մի ստվար մասը։ «Անդրանիկի՝ Սասնո հերոսամարտերու նկարագրությունը ավարտելե վերջ,—գրում է նա,—անհրաժեշտ էր դրել նաև այս մեծ հեղափոխական կռվողին կռվելու եղանակները։ Ասոր համար դիմեցինք ուղղակի իր հեղի-

15 Ա. Մարմարյան. նշվ. աշխ., էջ 82—83։

16 Ա. Չելեպյան. նշվ. աշխ., էջ 182։

17 Հայ ժողովրդի պատմություն. հ. 6, Երևան, 1981, էջ 476։

նակած «Մարտական հրահանգներ» անուն գրքին։ Կարտատպենք ամենագլխավոր և հետաքրքրական մասերը»[18]։

Անդրանիկը մեկնում է Թիֆլիս և հյուրընկալվում Հովհ. Թումանյանի տանը՝ իրեն նրա ազգականներից մեկը։ Այսպես ապահով էր՝ ցարական հետամուտ իշխանությունների ուշադրությունը շեղելու համար։ Այս ժամանակից է սկսվում Թումանյանի և Անդրանիկի մշտական բարեկամությունը։ «Հովհ. Թումանյան իր մանուկները կբերե, կկանգնեցնե Անդրանիկի առաջ և երգել կուտա Անդրանիկի երգերը։ Մանուկները ոչինչ տեղեկություն չեն ունենար հայրիկին անծանոթ ազգականի մասին, որ եկեր էր գուղեն և շուտով պիտի երթար»,—գրում է Թոթովենցը[19]։

Թումանյանի մասին գրած իր հուշերում Թոթովենցը գրում է. «Հաճախ ես հանդիպել եմ Թումանյանի տանը Անդրանիկին ու Թումանյանին միասին։ Նրանք իրար շատ էին սիրում՝ բարքերի, ըմբռնումների խիստ նմանություն կար երկուսի միջև։ Անդրանիկը ես անզուգական պատմող էր։ Նրան լսելիս պատմության, անձնավորությունների, տեղի, ժամանակի ընդհանուր մթնոլորտի ամենաիրական, կենդանի պատկերացում էինք ստանում»[20]։

Թիֆլիսից Անդրանիկը մեկնում է Եվրոպա՝ Շվեյցարիա, Ժնև, ապա Մանչեստր, իսկ 1905 թ. մարտին՝ Ֆիլիպե (Պլովդիվ, Բուլղարիա)։ Եվրոպայում իր հերոսի անցկացրած կյանքը Թոթովենցը պատմում է շատ համառոտ, գրեթե արձանագրողի ժլատ խոսքով։ Հետաքրքիր են նրա տեղեկությունները Ժնևում Անդրանիկի ու Սիամանթոյի հաստատած բարեկամության, ինչպես և Դ. Դեմիրճյանի հետ հանդիպումների մասին։ Թոթովենցը, սակայն, բաց է թողել կարևոր մանրամասներ։ Ըստ նրա շարադրանքի, «Դրոշակի» խմբագրությունն է տնօրինել Անդրանիկի Անդրկովկաս մեկնելու և հայ-թաթարական (հայ-ադրբեջանական) ընդհարումներին միջամուխ լինելու հարցը, և որ արդեն Դ. Դեմիրճյանի հետ գնացքով ճանապարհ ընկած Անդրանիկը հետ է դառնում այն բանից հետո, երբ «Ժնև լուր կստանա Կովկասեն, որ Անդրանիկի Կովկաս երթալը ավելորդ է զանազան պատճառներով»։ Ա. Թերզիբաշյանի աշխատության մեջ, սակայն, դրսևորված է Անդրանիկի սեփական տեսակետը ընդհարումների մասին։ Նա առարկում է Ռոստոմին (որը եկել էր Ժնև, Անդրանիկի Անդրկովկաս մեկնումը կազմակերպելու համար), նկատելով, որ ցարը և՛ հայերի հետ է, և՛ թաթարների (ադրբեջանցիների), և որ նրա բուն նպատակն է կողմերի երկուստեք միմյանց կոտորելը։ «Ապացույցը, թե ցարը կուզե, որ մենք և թաթարները շարունակենք զիրար կոտորել, հայտնի է այն փաստեն, թե ամիս մրն է ահա, որ կտեսե կռիվը։ Եթե չուզեր, որ մենք զիրար կոտորեինք, իր ցուցամատը կշարժեր և, հայը ըլլա թե թաթարը՝ կղադրեցնեին անմիջապես իրենց կռիվը և ասիկա կտեսեր ոչ թե մեկ ամիս, այլ ոչ տվելի քան մեկ րոպե»[21]։

Անկասկած, Անդրանիկը արտահայտում էր իր ժողովրդի սթափ մտածողությունը, որի ամբողջ խաստությունը պատրանքները ցրելու կարողության մեջ է։ Այդպիսի մտածողությունը սերունդների համար իր կենսական նշանակությունը պահպանում է նաև հետագայում, որովհետև պատրանքները ես ունեն վերարտադրվելու զարմանալի հատկություն, մասնավորապես այն հանրությունների մեջ, որոնք պատմությունը դիտում են որպես սոսկ ապրված անցյալ, և ոչ թե իբրև վերստեղծված արդիականություն։

Ֆիլիպեում իր հերոսի հաստատվելու շրջանը Թոթովենցը ուրվագծում է հատկանշական մի քանի կողմերով, որոնց մեջ ճանաչողական նշանակություն ունեն Անդրանիկի կապերը մակեդոնական հեղափոխականների հետ՝ ի

---

18 Ա. Մարմարյան. նշվ. աշխ., էջ 133։

19 Նույն տեղում, էջ 173։

20 Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան, Թոթովենցի ֆոնդ, № 7, էջ 10։

21 Ա. Թերզիպաշյան. Անդրանիկ. Փարիզ, 1942, էջ 103—104։

դեմ Բորիս Սարաֆովի։ Թոթովենցը այստեղ ևս հավատարիմ է մնում այն ճշմարտությանը, որ այն ամենը, ինչ առաջավոր էր, նպաստում էր քաղաքակրթությանը և ժողովրդի առաջադիմությանը՝ զուտ անհատական իմաստով. շատ դեպքերում դրսևորվում էր Անդրանիկի անհատականության միջոցով։ Այստեղից է սկիզբ տոնում Անդրանիկի և Բորիս Սարաֆովի փոխադարձ բարեկամությունն ու հարգանքը։ Անդրանիկը մոտիկից տեղյակ էր բուլղարացիների մարտական պատրաստություններին, նա զինավարժություններ էր անցկացնում բուլղարական խմբերի հետ։ «Մարտական հրահանգների» հեղինակը բավականաչափ արժեքներ ուներ տալու իր ռազմական փորձառությունից։ Միջկուսակցական պայքարի ընթացքում սպանվում է Բ. Սարաֆովը՝ խոր վիշտ պատճառելով Անդրանիկին։ Ուշագրավ մի ընդհանրացումով Թոթովենցը այսպես է բացատրում բռնապետության դեմ պայքարի ելած եղբայր ժողովուրդների զավակների փոխադարձ համակրանքը. «Պորիս Սարաֆոֆի և Անդրանիկի բարեկամությունը երկու հեղափոխությունների եղբայրակցությունն էր։

Պալքանյան բոլոր ազգությունները գտած էին իրենց ազատություններն ու պետական անկախությունները. մնացած էինք մենք և մակեդոնացիք։ Վիլայավորները զիրար կգտնեն և կսիրեն։ Ահա Պորիս Սարաֆոֆի և Անդրանիկի՝ իրարու հանդեպ ունեցած սերը, վստահությունը և եղբայրակցությունը»[22]։

Թոթովենցը իր հերոսի անհատականությունը ներկայացրել է նաև նրա աշխարհընկալման հետևողականության ու հաստատակամության համոզիչ ապացույցների մեջ, որը փաստորեն վերածվում է սկզբունքայնության և գաղափարական որոշակի դիրքորոշման։ Այստեղից են ծայր առնում Անդրանիկի տարակարծությունները դաշնակցության հետ, որոնք խորացան 1907 թ. վերջին, երբ այդ կուսակցությունը ստորագրեց երիտթուրքերի հետ համագործակցության դիմելու՝ Փարիզի դաշնագիրը։ Արդյոք քաղաքական գայթակղություն էր դա, թե փոքր ժողովրդի սխալվելու՝ չնախատեսված ապետների նախաղուռ, այս հարցը պետք է քննարկել մի այլ տեղ և մի այլ ժամանակ։ Իրողությունն այն է, որ հնչակները ևս զերծ չմնացին արևմտահայ ժողովրդի ընիկ և սահմանափակ տարածքում ընկերվարության ոչ մի սահման չճանաչող գաղափարախոսությունը տեղադրելու փորձությունից։ Մեծն Մուրատը ընտրվեց օսմանյան պառլամենտի անդամ։ Արդեն որոշակիորեն ձևավորված իր վերաբերմունքով և դրա համապատասխան մեկնաբանություններով Թոթովենցը ցույց է տալիս, թե ինչպես են դաշնակցական ընկերներն առաջարկում Անդրանիկին՝ ընտրվել օսմանյան պառլամենտի անդամ։ Անդրանիկը ցավ է հայտնում, որ Մուրատի պես մաքուր մարդը այժմ ստիպված է պառլամենտում «անպիտան թուրքերու հետ նստիլ և ոչինչ չընել», այնուհետև կտրականապես հայտարարում է. «Դուր հաշտվեցաք թուրքերու հետ, բայց ինձ թույլ տվեք անհաշտ մնալու. ես թուրքի հետ չեմ կրնար հաշտվիլ մինչև իմ մահը։ Բայց ես ձեզ գուշակություն մը կուզեմ ընել և կուզեմ, որ լսեք։ Եթե այս հեղափոխական կարծված թուրքերը օր մը ձեզ չկախեցին, ես մարդ չեմ։ Օր պիտի գա, որ այս հեղափոխականներն ալ պիտի դառնան սուլթան Համիտի պես զազան մը և բոլորդ ալ պիտի հոշոտեն»[23]։

Իր հերոսի այսպիսի հստակ իրատեսությանը Թոթովենցը տալիս է պարզ ու համոզիչ բացատրություն. ժողովրդի փիլիսոփայությունը շատ ավելի ճշմարտացի է, քան գիտական համակարգի բերված փիլիսոփայությունները, իսկ Անդրանիկը ժողովրդի խտացումն էր և զգացումների անխարդախ հայելին։

«Պալքանյան պատերազմ» գլխում հեղինակը ներկայացրել է Անդրանիկի մասնակցությունը Բուլղարիայի և բալկանյան մյուս դաշնակիցների՝ Թուր-

22 Ա. Մարմարյան. նշվ. աշխ., էջ 186։

23 Նույն տեղում, էջ 188։

թիայի դեմ մղվող պատերազմին (1912 թ. սեպտեմբեր—1913 թ. մայիս)։ Բուլղարահայերը բազմաթիվ կամավորներ տվեցին ասպնջական երկրի բանակին, առավել ևս, որ նա պատերազմելու էր հայերի դարավոր թշնամու դեմ։ Բուլղարահայ գաղութի որոշմամբ Անդրանիկի հրամանատարությանը պետք է հանձնվեր բուլղարական բանակի շարքերում ընդգրկված հայկական առանձին զորամասը։ 1912 թ. հոկտեմբերի 25-ին այդ զորամասը հետիոտն ընթացավ դեպի ռազմաճակատ։ Թոթովենցը այս անգամ ևս ցուցադրում է իր հերոսի և ժողովրդի ներքին, հոգևոր կապերը, որոնք ի հայտ են գալիս որանց ներքնապես հատուկ՝ անդիմադրելի մի մղումով։ Զորամասի ճանապարհին, Սամակով քաղաքում, Անդրանիկին է հանդիպում հայ «խեղճ արհեստավոր մը» և խնդրում նրան՝ հյուրընկալվել իր տանը։ «Անդրանիկ կերթա արհեստավորին տունը, ուր կտեսնե, որ հայ շինականը բացի համեստ ճաշե մը՝ պատրաստած է Անդրանիկի սիրած բանը՝ տաք ջուր ոտքերը լվալու համար։

Ահա նախնական սովորություն մը, որ շատ ավելի հարգի կարող է դառնալ, քան մեծ ճաշ մը կերցնելը ճամբեն հոգնած մարդու մը համար»,— գրում է Թոթովենցը[24]։

Բալկանյան պատերազմում հայկական զորամասի, Անդրանիկի, ինչպես և Դարեգին Նժդեհի ու նրանց զինակիցների հերոսական գործողությունների նկարագրությունը Թոթովենցը վերցրել է Արմեն Սյունու «Պալքանյան պատերազմ» գրքից։ Դա երկրորդ և վերջին ընդմիջարկությունն է, որ արել է Թոթովենցը՝ Անդրանիկի վերը հիշված աշխատությունից հետո։

Բալկանյան պատերազմը, ինչպես հայտնի է, վերաճեց բալկանյան ժողովուրդների միջև մղվող պատերազմի։ Դրանից առաջ (1913 թ. մայիսի 23) հաշտություն էր կնքվել Թուրքիայի հետ։ Անդրանիկը և հայ կամավորները անելիք չունեին այդ պատերազմում։ Հայկական զորամասը լուծարքվեց։ Եվ հենց բուլղարական հողում, Վառնայի իր տանը, Անդրանիկը իմացավ Առաջին համաշխարհային պատերազմի մասին։

«Համաշխարհային պատերազմը» գլխում Թոթովենցը անդրադառնում է Կովկասյան ճակատում Անդրանիկի կամավորական զորամասի գործունեությանը, համառոտ նկարագրում Վանի, Դիլմանի, Դատվանի ճակատամարտերը, Բիթլիսի գրավումը և գրանցում Անդրանիկի ու նրա մարտիկների ներդրած հերոսական ավանդը։ Թոթովենցը ուշադրություն է դարձնում հնարամիտ հակառակորդի մեջ նույնիսկ հնարավոր բարեկամ որոնելու Անդրանիկի լայնախոհությանը։ Այդպիսի մի պատկեր է ներկայացնում Խոյի ուղղությամբ՝ Վան տանող ճանապարհին Անդրանիկի և երեք աշիրաթապետների բանակցությունների նկարագրությունը։ Անդրանիկը խոստանում է չդիպչել նրանց, եթե նրանք ևս չխանգարեն իր առաջխաղացումը։ «Այս ցեղապետներն մեկն էր նշանավոր Ճիհանկիր աղան, որ հայկական վերջին ճգնաժամին մեջ դաշնակցեցավ հայերուն և պաշտպանեց Ջուլֆա—Երևան երկաթուղագիծը։ Անիկա ուներ միայն 200 ձիավոր և մինչև ետքն ալ մնաց հավատարիմ հայ ժողովուրդին և Անդրանիկին»,— գրում է Թոթովենցը եզդի ցեղապետի մասին[25]։

Մոլլա Հասանից՝ Վանից մեկուկես օրվա հեռավորության վրա Անդրանիկի զորամասի նահանջը Թոթովենցը բացատրում է Խալիլ փաշայի գործոնով։ Սա անցել էր Ռևանդուզով, գրավել Թավրիզը և սպառնում էր ամբողջ Կովկասին։ Այս արշավանքը, ինչպես նկատում է հեղինակը, ոչ թե թուրքերի ռազմագիտական մտքի արդյունքն էր, այլ գերմանական զինվորական մասնագետների։ Ֆոն դեր Գոլցը ինքն էր Միջագետքում կազմակերպել Խալիլի զորագնդերը։ Հաջողության դեպքում այս արշավանքը հայ ժողովրդի համար հղի էր ծանր վտանգներով։ Վանի Ջևդեթ փաշան սպասում էր

---

24 Նույն տեղում, էջ 194։

25 Նույն տեղում, էջ 244։

Խալիլի անցումների հաջող ավարտին, որպեսզի իր ամբողջ ուժերը նետեր Վանի ըմբոստ հայության դեմ և ընկճեր նրա դիմադրությունը։ Այնուհետև, հաջողության դեպքում, ինչպես նկատում է Թոթովենցը, թուրքերը սեպ կխրեին ռուսական բանակի Սարիղամիշի և Ալաշկերտի թևերի միջև և ռուսները հարկադրված կլինեին հետ քաշվել դեպի Կովկասյան լեռները։ Թոթովենցը բացահայտում է պանթուրքիզմի մերձավորագույն նպատակները, որոնք ամբողջովին հաշվի էին առնված գերմանացիների մշակած ռազմական ծրագրերում։ «Գերմանները և համաթուրանականության Պոլսո մայր թևը,— գրում է նա,—իր մեծագույն հույսը դրած էր կովկասյան թաթարներուն վրա, որոնք պիտի ապստամբեին և զարկեին ռուսական բանակի թիկունքեն»[26]։

Խալիլ փաշայի զորքերը կանգնեցվեցին Դիլմանի մոտ՝ ռուսական բանակի մի մասի և Անդրանիկի զորագնդի տված համառ մարտերի պայմաններում։ Խալիլը, ի վերջո, նահանջում է և հեռագրում Ջևդեթին՝ թողնել Վանի հայության պաշարումը և անցնել լճի մյուս ափը։ Այգեստանը կարող էր ազատ շունչ քաշել։ «Եթե Անդրանիկը չի հալածեր թշնամին, անիկա դանդաղորեն և իր ուզած ուղղությամբ պիտի նահանջեր և երթար Վանի ուղղությամբ»,—այսպես է գնահատում Դիլմանի ճակատամարտում Անդրանիկի գնդի մղած հաղթական ճակատամարտի նշանակությունը Թոթովենցը[27]։

Թոթովենցը իրազեկ է ռազմավարական նրբություններին, այն հայացքով է դիտարկում այս կամ այն ճակատամարտի նշանակությունը և պետք է կարծել, որ այս իմացության համար նա ոչ քիչ բանով պարտական է իրեն՝ Անդրանիկին։

Թոթովենցը Արարատյան գնդի մարտերի պատմությունը ներկայացնում է մինչև Բիթլիսի գրավումը։ Գրողը խոսում է Կովկասյան բանակի հրամանատարության անհաջող գործողությունների մասին՝ Վանից ընդհանուր նահանջի հրամանի կապակցությամբ։ Ծանր վիճակ ստեղծվեց հայերի համար։ Վանը գաղթեց, իսկ Մուշը և Սասունը բնաջնջվեցին։ Անդրանիկի կողմից Բիթլիսի գրավման կապակցությամբ Թոթովենցը ցույց է տալիս ցարական գեներալ Ապացիևի հույժ անբարյացակամ վերաբերմունքը Անդրանիկի և նրա կամավորների նկատմամբ, նրա զբաղմունքները և այլն։ Բաբերդաստիճան սպայակույտի մեջ բուն դրած նախանձի, ինտրիգների ու սադրանքների մթնոլորտը թևաթափ էր անում Անդրանիկին։ Հնարավոր չէր գործել վերին հրամանատարության անհանդուրժող միջավայրում և Անդրանիկը, զորամասի հրամանատարությունը թողնելով Սմբատին, մեկնում է Թիֆլիս։

1917 թ. ապրիլին Անդրանիկը իր համախոհ մտավորականների հետ ձեռնարկում է «Հայաստան» օրաթերթի հրատարակությունը։ Կամավորական ջոկատներում զորավարի հետ մարտնչած Թոթովենցը լիովին տրվում է այդ գործին։ «Ամբողջ հատոր մը պետք է գրելու համար այն բոլոր խնդիրները, որոնք պատճառ եղան իր ղեկավարության տակ հրատարակված «Հայաստան» օրաթերթի երևնալուն»,—գրում է Թոթովենցը[28]։

Գրքում Թոթովենցը չի խոսում «Հայաստանի» հրատարակության պատճառների մասին, սակայն, եթե մի կողմ թողնենք դրա անմիջական շարժառիթները, զորավարը օրաթերթի անհրաժեշտությունը կապակցում էր արևմտահայ գաղթականության վերապրելու, նրա կործանվող բեկորների կյանքը փոքրիշատե կազմակերպված հունի մեջ դնելու հետ։ «Հայաստանը» վեր էր կանգնած կուսակցություններից և կրում էր Անդրանիկի ու նրա մտավորական շրջապատի (Թոթովենց, Գ. Լևոնյան, Ն. Դշխոյան, Լ. Թյությունճյան և ուրիշներ) մտայնությունն ու դիրքորոշումը, ըստ որոնց, քաղաքական տեսակետները անպայմանորեն պետք է ստորադասվեն գաղթական արևմտահայության հարատևման կարևորագույն գործին։ «Հայաստանը» դրր-

26 Նույն տեղում, էջ 247։

27 Նույն տեղում, էջ 252։

28 Նույն տեղում, էջ 260։

ված է շատ ռամկավար հիման վրա։ Անիկա ունի 16 հոգիե բաղկացած խորհրդական խորհուրդ մը՝ ընտրված և վավերացված Անդրանիկեն, պարփակելով իր մեջ ներկայացուցիչներ թեև անպաշտոն, բայց բոլոր հոսանքներեն»,—գրում էր թերթը[29]։

«Անդրանիկ հայկական վերջին ճգնաժամին մեջ» վերջին գլխում Թոթովենցը շարադրում է 1917 թ. մայիսից մինչև 1919 թ. մարտն ընկած ժամանակաշրջանում Անդրանիկի գործունեության պատմությունը։ Թիֆլիսում թերթի հրատարակության հոգսերով և այնուհետև հայ քաղաքական կյանքի իրարամերժ միտումներով ու հակասություններով մտահոգ Անդրանիկը լարված սպասում էր։ Ռուսական բուրժուադեմոկրատական հեղափոխությունից հետո հայության մշուշոտ ճակատագիրը պետք է պարզեր մյուս կարևոր հարցականը՝ համաշխարհային պատերազմի ելքը։ Զորավարը, ինչպես իր ժողովուրդը, տեսնում էր գերմանա-թուրքական զինակցության պարտությունը՝ կործանվող կայսերական Գերմանիայի և օսմանյան Թուրքիայի փլատակների մեջ ընդնշմարելով կորսված և անձկալիորեն հեռու հայրենի եզերքները։ 1917 թ. Անդրանիկը Թոթովենցի միջոցով կապվում է Թիֆլիսի ամերիկյան հյուպատոսի հետ՝ բանակցելով նրա տերության օգնությամբ հայ ջոկատներին թուրքերի դեմ կռվի հանելու հնարավորության շուրջ։ Ամերիկյան հետաքրքրում էր, թե Անդրանիկը ինչպես է ընդունակ թեթևացնելու անգլիական բանակի գործողությունները Միջագետքում։ «Այս հարցումին վրա Անդրանիկի աչքերը փայլեցին ուրախության ցոլքերով, որովհետև իր անձնական նպատակն էր գործել առանձնապես Պիթլիզի նահանգի ուղղությամբ դեպի հարավ»,—գրում է Թոթովենցը[30]։ Բանակցությունները, սակայն, որևէ արդյունք չեն տալիս, Կերենսկին անվստահություն էր ցուցաբերել հայության ազատագրական պայքարի նկատմամբ և չէր խրախուսել ազգային զորամասերի կազմակերպումը Ռուսաստանի ծայրագավառներում։ Այնուհետև վրա հասան նոր իրադարձություններ՝ Հոկտեմբերյան հեղափոխությունը Ռուսաստանում, ապա՝ սեյմի ստեղծումը Անդրկովկասում։ Քայքայվեց կովկասյան ճակատը, պատերազմից հոգնած և հուսաբեկ զինվորները տուն էին շտապում։ Այս պայմաններում Արևմտահայ խորհուրդը կոնֆերանս է գումարում՝ ռուսական զորքի լքված Արևմտյան Հայաստանի տարածքների պաշտպանության համար։ Այդ նպատակով որոշվում է ստեղծել Հայաստանի Երկրապահ զորամաս՝ Անդրանիկի գլխավորությամբ։ Թոթովենցը այս իրադրության մեջ ևս ցույց է տալիս, որ Անդրանիկը չի ցանկանում առնչվել, ուրեմն և կաշկանդվել որևէ կուսակցության գաղափարական ու գործնական նախասիրություններով։ Ռ. Տեր-Մինասյանին, Վ. Փափազյանին և Սեպուհին, որոնք եկել էին դաշնակցական բյուրոյի համաձայնությունը հայտնելու այդ նշանակմանը, նա պատասխանում է, որ ինքը կուսակցությունների հետ գործ չունի և որ Արևմտահայ կոնֆերանսը իրեն արդեն նշանակել է Երկրապահ զորամասի հրամանատար[31]։

Թոթովենցը համակողմանիորեն է ներկայացնում քաղաքական խառնակ դրությունը Անդրկովկասում, Հայաստանում և հայ ժողովրդի վրա տիրող բազմիշխանությունը՝ Ռուսահայ ազգային խորհուրդը, Հայաստանի ապահովության խորհուրդը, ռուսահայ կորպուսի հրամանատարությունը, Հայաստանի Երկրապահ զորամասի հրամանատարությունը, Հայաստանի կոմիսարիատը, ազգային կուսակցությունները՝ իրենց մասնաճյուղերով և այլն, և այլն, բավականաչափ բազմաթիվ մարմիններ՝ մի բուռ ժողովրդի օրհասական դարձող վիճակը կարգավորելու համար։ Իրարամերժ կողմնորոշումների ու գործողությունների այս լաբիրինթոսի մեջ գրողը խորաթափանց կերպով նկատում է իրական վտանգի ձևավորումը՝ ադրբեջանական ազգայնամոլնե-

29 «Հայաստան», Թիֆլիս, 16 սեպտեմբերի, 1917։

30 Ա. Մ ա ր մ ա ր յ ա ն. Նշվ. աշխ., էջ 263։

31 Նույն տեղում, էջ 278։

ռն բացահայտորեն հակահայկական, հակառուսական անսպասելի գործողությունները։ «Ռուս բանակը հանդիպեցավ իր չսպասածին։ Չէր սպասեր, որովհետև տարիներ բարյացակամ եղած էր անդրկովկասյան թաթարներուն հանդեպ, չէր ակնկալեր, որ թաթարական զինված, կանոնավոր, մարզված զինվորներ, վերջին պատերազմի հարմարություններով խրամատներ պատրաստեն Շամխորի մեջ և իր գնացքը անցած ատեն կրակ բանան և կոտորեն հազարներ»,—գրում է նա[32]։

Գրքում Թոթովենցը հանգամանորեն նկարագրում է Անդրանիկի՝ 1918 թ. փետրվարից մինչև 1919 թ. ապրիլ ժամանակաշրջանի գործունեության կարևոր հատվածները։ Նրա տողերի տակ վերակենդանանում են զորավարի եռանդուն և հուսահատական ջանքերը՝ կանխելու զորքի քայքայումը, դավաճանությունները ու գասալքումները։ Գործում էր Անդրանիկի կազմակերպած ռազմական ատյանը Կարինում, սակայն ճակատի քայքայման դեմն առնել այդպես էլ չհաջողվեց։ Հրաժարվում են կռվելուց հայկական Ա և Դ գնդերը։ Զորավարի շրջապատի մարդկանց՝ Թորգոմին, Սեպուհին, Բեժանբեկովին, Հ. Զավրիևին և այլոց Թոթովենցը բնութագրում է կենդանի գործողությունների մեջ։ Իր նկարագրած անձանց հեղինակը ամենից առաջ գնահատում է հայրենասիրության չափանիշով, որի ամենաբարձր կրողը գրքում Անդրանիկն է։

Կարինի անկման իրողությունից հետո Թոթովենցը համառոտ նկարագրում է Անդրանիկի զորամասի անցումը Նախիջևանից Խոյ, ապա Ջուլֆա և Զանգեզուր, որտեղ էլ ավարտում է իր պատմությունը։ Գիրքն ավարտվում է Անդրանիկին նվիրված հայտնի երգով՝ «Իբրև արծիվ սավառնում ես լեռ ու ժայռ»։

Թոթովենցի «Զոր. Անդրանիկ և իր պատերազմները» գիրքը ունի պատմական լուրջ արժեք, ոչ քիչ դեպքերում՝ սկզբնաղբյուրի անգնահատելի նշանակություն։ Սակայն հեղինակը հմտորեն գործի է դրել նաև գեղարվեստական արտահայտչամիջոցներ։ Անդրանիկը գրքում հանդես է գալիս որպես շարունակ զարգացող բնավորություն՝ միջավայրի հետ ունեցած իր փոխհարաբերություններով, իրականության ու նրա քաղաքական ընթացքի վերաբերյալ ինքնատիպ հայացքներով ու գաղափարներով։ Ժողովրդական հերոսը իր անընդգրկելի հայրենասիրությամբ, հոգևոր շնորհներով ու ռազմագիտական մեծ տաղանդով, բնավորության ցայտուն գծերով, իր գեղարվեստական համոզիչ կերպավորումն է ստացել Թոթովենցի գրչի տակ։ Դրանով էլ պայմանավորված է Թոթովենցի գրքի պատմագեղարվեստական անգնահատելի արժեքը։

ВААН ТОТОВЕНЦ ОБ АНДРАНИКЕ

Доктор ист. наук А. А. ХАРАТЯН

Резюме

Книга известного армянского писателя Ваана Тотовенца (1889—1937 гг.) «Генерал Андраник и его войны» (Константинополь, 1920) посвящена жизни и деятельности народного героя. В годы первой мировой войны Тотовенц был боевым соратником Андраника, воевал в рядах добровольческих отрядов под его предводительством. Затем с мая 1917 по февраль 1918 г. в сотрудничестве с Андраником он редактировал газету «Айастан» («Армения»). Книга Тотовенца представляет собой огромную источниковедческую и художественную ценность. В дальнейшем она оказала большое влияние на литературу, посвященную Андранику. Выдающийся мастер армянской прозы В. Тотовенц в 1937 г. стал жертвой сталинского террора.

32 Նույն տեղում, էջ 279։